

# ԼՈՒՅՍ

Մշակութային և հասարակական ամսագիր

لويس

LOUYS

Armenian Monthly

ISSN 1682-5446



Իմ կյանքի ամենամեծ երջանկությունը  
եղել է հայոց լեզվին տիրապետելը:

ՎԻԿՏՈՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

*Պայքարենք լատինատառ հայերենի դեմ*

# 192, Հոկտեմբեր 2014 թ.

No 192, Oct. 2014

شماره ۱۹۲ آبان ماه ۱۳۹۳

# Այս համարում

## Հայերեն բաժին

1- Իրանահայ Համայնք.....	1
2- Հայաստան.....	2
3- Արցախ.....	9
4- Արեւմտյան Հայաստան.....	10
5- Միյություն.....	12
6- Միջազգային.....	17
7- Խոհեր.....	19
8- Գծանկարչություն.....	20
9- Առաձանի.....	20

## Պարսկերեն բաժին

1- Լուրեր.....	1-4
----------------	-----



**Շապիկի առաջին էջում՝** Երեւանը դարձավ 2796 տարեկան  
**Վերջին էջում՝** Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 192, Հոկտեմբեր 2014 թ.

No. 192, October 2014

شماره ۱۹۲ آبان ماه ۱۳۹۳ - ماهنامه لویس

# ԼՈՒՅՍ

## Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

**Էդ. Բաղդասարյան**

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys\_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

## LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

**Ed. Baghdasarian**

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys\_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

**Թերթի Գինը՝** Հատավաճառ - 5000 ռիալ  
**Բաժանորդագրություն՝**

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են  
չհամընկնել խմբագրության տեսակետներին:  
Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին  
պարտադիր է:

# Հայաստանի խորհրդարանում տեղի ունեցած ահաբեկչությունից անցել է 15 տարի



15 տարի առաջ՝ հոկտեմբերի 27-ին, ոճրագործների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեցին Հայաստանի Ազգային ժողովի նիստերի դահլիճ եւ դիմահար կրակոցներով սպանեցին կառավարության եւ խորհրդարանի անդամներին:

Ահաբեկչության զոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի նախագահ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հենրիկ Աբրահամյանը եւ Միքայել Բոթանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տեւեց 2001-2003 թվականները: 6 ահաբեկիչները, այդ թվում՝ նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վոսաթ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը եւ Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համլետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման:

3 տարի տեւած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չցանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին եւ մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով:

## Իրանահայ Համայնք

### Հայաստանի Հանրապետության վարչապետի այցելությունը՝ Նոր Ջուղա



Երեքշաբթի, հոկտեմբերի 21-ի կեսօրին՝ ժամը 12:40-ին, Նոր Ջուղայի հայոց ազգային կրթահամալիրի աշակերտության ոգեշնչող բացականչության ներքոյ, կրթարան մուտք գործեց Հայաստանի Հանրապետության վարչապետ Յովիկ Աբրահամեանը եւ նրան ընկերակցող Հայաստանի Հանրապետության նախարարներից ու պետական բարձրաստիճան այրերից բաղկացած պատվիրակությունը, Իրանում ՀՀ-ի դեսպան Գրիգոր Առաքելեանը, ՀՀ-ում Իրանի դեսպան Մոհամմադ Ռեիսին, Սպահանի նահանգապետ Ռասուլ Զարգարվուրդը եւ Հայաստանի Հանրապետության ու Սպահանի պետական պաշտօնատար անձինք:

Յարգելի հիւրերին դպրոցի մուտքի մօտ դիմաւորեցին Սպահանի հայոց թեմի Կրթական խորհրդի, Սպահանի կրթա-դաստիարակչական հիմնարկի եւ հայոց դպրոցի պատասխանատուները, ապա պատվիրակությունը մօտեցաւ դպրոցի բակում շարքեր կազմած աշակերտներանը, ովքեր Իրանի Իսլ. Հանրապետության եւ Հայաստանի Հանրապետության դրօշների ծածանումով եւ ուրախ կանչերով ողջունեցին հիւրերին:

Կրթական խորհրդի կողմից բարիգալստեան խօսք ընթերցեց Ջանսոն Աղաբաբայեանը, համալիրի պատմութեան համար փայլուն մի էջ համարելով ՀՀ-ի վարչապետի եւ նախարարների ու բարձրաստիճան պատվիրակութեան ներկայութիւնը: Ապա հայոց դպրոցի տարբեր բաժանմունքների աշակերտներն անհատական եւ խմբական ասմունքներ, երգեր ու խօսքերի մի կոկիկ յայտագիր ձօնեցին վարչապետին եւ հիւրերին:

Գեղարուեստական ծրագրից յետոյ արտայայտեց ՀՀ վարչապետը, ով իր գնահատանքի խօսքն ուղղեց աշակերտութեանը եւ ուսուցիչներին: Նա ի ուրախութիւն

բոլորի, յայտնեց, որ Հայաստանի Հանրապետութեան պատկան մարմիններն իրենց ամբողջական զօրակցութիւնը կը բերեն կրթահամալիրի բոլոր ձեռնարկների իրականացման ուղղութեամբ եւ ոչ մի ջանք չեն խնայելու կրթարանի վերելքի համար: Հանդիպման աւարտին պրն. վարչապետը մօտկից շփուեց եւ զրուցեց աշակերտութեան հետ:

Այնուհետեւ վարչապետ Յովիկ Աբրահամեանն ու նրան ընկերակցող պատվիրակությունը ժամը 15:30-ին այցելեցին Նոր Ջուղայի Հ. Մ. Ս. «Արարատ» միութիւն, մասնակցելու Սպահանի հայոց թեմի Թեմական խորհրդի կողմից կազմակերպւած ճաշկերոյթին, որին նոյնպէս իրենց ներկայութեամբ պատուեցին ու մեծ շուք պարգեւեցին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետը, իրանահայ երեք թեմերի թեմակալ առաջնորդներն ու իրենց ընկերակցող հոգեւորականաց դասը: Գաշկերոյթին ներկայ էին նաեւ Ս. Յովսէփ Արեւմաթացի եկեղեցու 350-ամեակին նւիրած խորհրդածոյովի շրջագծում հրաւիրեալներն ու դասախօսները, շրջանի Հայ Դատի յանձնախմբի, Սպահանի հայոց թեմի ազգային մարմինների, միութիւնների եւ հայոց ազգային դպրոցների ներկայացուցիչները:

Ճաշկերոյթն աւարտուելուն պէս պրն. Աբրահամեանը եւ միւս պետական հիւրերը այցելեցին Ս. Ամենափրկիչ վանք, ուր նախ ծաղիկներ մատուցեցին Հայոց Տեղասպանութեան գոհերի յիշատակին կառուցւած յուշարձանին, որից յետոյ վանքի «Օաղկեայ» դահլիճում հանդիպում կայացաւ նշւած հիւրերի, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Վեհափառ Հայրապետի եւ իրանահայ երեք թեմերի առաջնորդների ու Սպահանի հայոց թեմի Պատգամաւորական ժողովի դիւանի եւ Թեմական խորհրդի անդամների միջեւ: Հանդիպման ընթացքում բարիգալստեան եւ թեմի ազգային մարմինների մասին բացատրութեամբ հանդէս եկաւ Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Բաբգէն եպս. Չարեանը, ապա արտայայտեց ՀՀ Սփիւռքի նախարար Հրանուշ Յակոբեանը, ով դրատանքի խօսք ուղղեց Նոր Ջուղայի պատմական անցեալի եւ հարուստ մշակոյթի մասին: Այնուհետեւ պրն. վարչապետի միջոցով Արարատ լեռը պատկերւած մի գեղանկարչութիւն նւիրեց Սպահանի հայոց թեմին, իսկ թեմիս կողմից ձեռամբ Վեհափառ Հայրապետի, ՀՀ վարչապետին եւ նրան ընկերակցող 7 նախարարներին շնորհեցին Ս. Յովսէփ Արեւմաթացի եկեղեցու 350-ամեակի յոբելեանական յանձնախմբի գերբը պատկերող յուշամեդալներ:

Հանդիպումից յետոյ, Պետական հիւրերն այցելեցին Ս. Յովսէփ Արեւմաթացի եկեղեցի, ապա վանքի Խաչատուր վրդ. Կեսարացու անւան թանգարան:

Վարչապետ Յովիկ Աբրահամեանը երեկոյեան մասնակցեց նաեւ Ս. Յովսէփ Արեւմաթացի եկեղեցու 350-ամեակին նւիրած եզրափակիչ ձեռնարկին, որից յետոյ մեկնեց Սպահանի օդանաւակայան՝ Հայաստան վերադառնալու նպատակով:



## Հայաստան

### Ռոբերտ Քոչարյանը շահագրգռված է, որ հոկտեմբերի 27-ը չբացահայտվի. Արամ Սարգսյան

27.10.2014



Հոկտեմբերի 27-ի ահաբեկչության հետեւանքով գոհված Վազգեն Սարգսյանի եղբայրը՝ «Հանրապետություն» կուսակցության քաղաքական նախագահ Արամ Սարգսյանը, Հոկտեմբերի 27-ի գործը համարում է չբացահայտված: Նա համաձայն է ՀՀ շատ քաղաքական գործիչների այն տեսակետի հետ, որ Հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը արտաքին միջանորոգության հետեւանք է, սակայն կարծում է, որ եթե ներքին համապատասխան ծառայությունները անթույլատրելի անգործության մեջ չլինեին, հնարավոր կլինել խուսափել ողբերգությունից:

«Գործընթացները եւ դատաքննության զարգացումը հուշում էին, որ գործող նախագահ Ռոբերտ Քոչարյանը շահագրգռված է, որ գործը չբացահայտվի: Ինչ-ինչ բաներից վախենալով ամեն օրը ընթերցում էր եղ գործի նախաքննությունը, դատաքննությունը արագացնում էր, դանդաղացնում էր: Ես էն գործն էր, որի բացահայտումը պիտի ցույց տար, թե ովքեր են Հայաստանի թշնամները»,- այս մասին այսօր՝ հոկտեմբերի 27-ին, «Եռաբլուր» պանթեոնում լրագրողների հետ գրույցում ասաց Արամ Սարգսյանը:

Արամ Սարգսյանը նշեց, որ Հոկտեմբերի 27-ը բացահայտված չի կարելի համարել, քանի որ եւ իր, եւ հասարակության մոտ կան բազմաթիվ հարցեր. «Հասարակության մոտ բազմաթիվ հարցեր կան՝ սկսած Հոկտեմբերի 27-ի կազմակերպումից, զենքերը ԱԺ տանելուց, էլ կրակոցներից յուրաքանչյուր գոհվածի առանձին գոհվելու պայմաններից: Անհասկանալի է, որ երկրի նախագահը գնում է բանակցության, երկու ժամ առաջ սենյակ են պատրաստում նախագահի համար եւ այդ սենյակը չի գաղտնայվում: Իսկ եթե գաղտնայվել է, ո՞ր են այդ գաղտնայվածի ձայնագրությունները, ի՞նչ երրորդ ձայնագրության մասին էր խոսում Տիգրան Նաղդալյանը: Բազմաթիվ հարցեր կան, որոնք առեղծված են մնացել»:

Վազգեն Սարգսյանի եղբայրը կարծում է, որ աշխարհաքաղաքական խնդիրները, վերջին շրջանի զարգացումները եւս ապացուցում են, որ գործը բացահայտված չէ:

«Հոկտեմբերի 27-ը ոճրագործություն էր երկրի պետականության, ժողովրդի դեմ: Երկիրը այն ժամանակ տարածաշրջանում առաջատար էր դարձել, Թուրքիայում եւ Իրանում էլ ընկալումը լրիվ ուրիշ էր Վազգեն Սարգսյանի եւ Կարեն Դեմիրճյանի պարագայում: Ակնհայտ է, որ Հոկտեմբերի 27-ը ոճրագործություն էր, երկրի պետականության, ժողովրդի դեմ: Հետ հայացք գցելով նախկին ու ներկա քաղաքական զարգացումների վրա, տեսնելով, թե ինչ տեղի ունեցավ, երբ Վրաստանն ուզեց ինքնուրույն որոշումներ կայացնել, ինչպես կորցրեց Աբխազիան եւ Օսեթիան, ինչ քաղաքական գործընթացներ եղան, ինչ տեղի ունեցավ Ուկրաինայում, երբ որոշեց առանձին հանդես գալ առանց մեր մեծ եղբոր օժանդակության ու աջակցության: Ռուսաստանը իրենից անջատվող ցանկացած երկրի ինչ-որ կերպ պարտադրում կամ պատժում է»,- ասաց Արամ Սարգսյանը:

Արամ Սարգսյանը նշեց, որ Հոկտեմբերի 27-ի ոճրագործությունը մեր պետությունը հետ մղելու նպատակ ուներ. «Եթե հիշում եք, այդ ժամանակ Վազգեն Սարգսյանը վերադարձավ Ամերիկայի Միացյալ Նահանգներից եւ Գյումրիում Ֆելիքս Փիրումյանի նշանակման ժամանակ ասաց, որ շատ կարճ ժամանակում խնդիրներ են լուծվելու: Այդ ժամանակ Հայաստանի իշխանությունները՝ Կարեն Դեմիրճյանն ու Վազգեն Սարգսյանը, լուրջ հեղինակություններ էին տարածաշրջանում եւ տարածաշրջանից դուրս: Նրանց արժանապատվությունն ու ինքնասիրությունը ոտնահարելու փորձ անգամ որեւէ քաղաքական գործիչ կամ պետության ղեկավար իրեն թույլ չէր տա»:

Լրագրողի այն հարցին, թե ինչպիսին կլինե՞ր Հայաստանը, եթե չլինե՞ր Հոկտեմբերի 27-ի ողբերգությունը, Արամ Սարգսյանը պատասխանեց.

«Իմ մոտեցումները շատ սուբյեկտիվ կլինեն, քանի որ Վազգենը իմ եղբայրն էր: Ես համոզված եւ հավատացած եմ, որ բացարձակ այլ Հայաստան կունենայինք՝ ճանաչելով թե Վազգենին, թե Կարեն Դեմիրճյանին, թե «Արդարություն եւ դաշինք» այդ գործընթացը, որն սկսեց հիմք դնելով ժողովրդավարության: Հավատացե՛ք, որ Վազգեն Սարգսյանը էսօրվա այս իշխանությունների վարած ընտրությունների նման ինքն էլ կարող էր, առանց Կարեն Դեմիրճյանի, Հանրապետականով մեծամասնություն վերցնել: Բայց Վազգենը հստակ հասկացավ, որ էդ ճանապարհը փակուղային է, էդ փակել է պետք: Արժանապատվություն ուներ այս երկիրը, տարածաշրջանում գործող էր դարձել»:

Վազգեն Սարգսյանի խոսքով, այսօր մեր երկիրը այլ կլինե՞ր, քանի որ հոկտեմբերի 27-ի գոհերը խորը բարոյականություն ունեցող լիդերներ էին:

«Չոհերը խոր բարոյականության մարդիկ էին, լուրջ բարոյականության, ոչ մեկ չի կարող ասել, որ էն ժամանակ, երբ Ալիևները մատանիներ էին նվիրում Բրեժնեւին, Դեմիրճյանը նման բան չի արել եւ թույլ չի տվել, որ իր ինքնասիրությունը ոտնահարեն, նույն կերպ Վազգեն Սարգսյանը: Ինքը չէր խմում Գրաչովի կենսաքիմիկատիկա Պավել Գրաչովն էր խմում Վազգենի կենսաքիմիկա, եւ Վազգենին իր եղբայրը համարում: Սրանք մարդիկ էին, որոնք կարողանում էին իրենց շրջապատում դրսեւորել, կարողանում էին լիդեր լինել, որ դրսից եկածները իրենց սպասեն եւ ոչ թե իրենք նրանց: Նաեւ էդ առումով շատ համեստ էին իրենց ապրուստի մեջ: Նայե՛ք Դեմիրճյանի թողած տուն տեղը, հնարավորությունը, նայե՛ք Վազգենինը, բացի այդ հպարտությունից, բացի էդ հաղթանակից ոչինչ չունեն»,- ասաց Արամ Սարգսյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Մի օր ճշմարտությունը ջրի երես դուրս կգա. Արմեն Սարգսյան

27.10.2014



«Հ պաշտպանության նախարարի խորհրդական, Հոկտեմբերի 27-ի ահաբեկչության հետևանքով գոհված Վազգեն Սարգսյանի եղբայր Արմեն Սարգսյանը կարծում է, որ Հոկտեմբերի 27-ի ճշմարտությունը վաղ թե ուշ «ջրի երես դուրս կգա»:

«Ընդամենը մի փոքր ցանկություն, ավելի խորը ցանկություն է պետք, որ կարողանան ի հայտ բերել», - այսօր՝ Հոկտեմբերի 27-ի 15-րդ տարելիցին, լրագրողների հետ զրույցում ասաց Արմեն Սարգսյանը:

Ընդգծելով, որ դա իր անձնական կարծիքն է, Արմեն Սարգսյանն ասաց, որ իր համոզմամբ, կատարվածի մեղավորները միայն դրա համար պատժված անձինք չեն եղել:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## Բոլորովին այլ երկրում կապրեինք, եթե չլիներ Հոկտեմբերի 27-ը. Ստեփան Դեմիրճյան

27.10.2014



Իշխանություններն ամեն ինչ արեցին հոկտեմբերի 27-ի գործը կոծկելու համար: Այս մասին այսօր՝ Հոկտեմբերի 27-ի 15-րդ տարելիցին, լրագրողների հետ զրույցում ասաց ՀԺԿ նախագահ Ստեփան Դեմիրճյանը:

Նրա խոսքով՝ Հոկտեմբերի 27-ի գործով դատավարությունը չլիարատեց հասարակության կասկածները:

«Հոկտեմբերի 27-ի ծանր հետևանքներն առ այսօր հաղթահարված չեն: Համոզված եմ, որ բոլորովին այլ երկրում կապրեինք այսօր, եթե չլիներ Հոկտեմբերի 27-ը», - ասաց Ստեփան Դեմիրճյանը:

Համոզմունք հայտնելով, որ ոճրագործությունն իրականացնողների հետևում այլ ուժեր են կանգնած եղել,


Ստեփան Դեմիրճյանը հույս հայտնեց, որ ճշմարտությունը ի վերջո կբացահայտվի:

Հիշեցնենք, որ 15 տարի առաջ հոկտեմբերի 27-ին ահաբեկիչների խումբը՝ Նաիրի Հունանյանի գլխավորությամբ, ներխուժեց Հայաստանի ԱԺ նիստերի դահլիճ եւ դիմահար կրակոցներով սպանեց կառավարության եւ եւ խորհրդարանի անդամներին: Ահաբեկչության զոհ դարձան երկրի վարչապետ, Սպարապետ Վազգեն Սարգսյանը, խորհրդարանի խոսնակ Կարեն Դեմիրճյանը, ԱԺ փոխնախագահներ Յուրի Բախշյանն ու Ռուբեն Միրոյանը, օպերատիվ հարցերի նախարար Լեոնարդ Պետրոսյանը, խորհրդարանի պատգամավորներ Արմենակ Արմենակյանը, Հերիկ Աբրահամյանը եւ Միքայել Բոթանյանը:

Ահաբեկիչների նկատմամբ դատավարությունը տեւեց երեք տարի (2001-2003): 6 ահաբեկիչները, այդ թվում նրանց ղեկավար Նաիրի Հունանյանը, նրա եղբայր Կարեն Հունանյանը, նրա քեռին՝ Վռամ Գալստյանը, Դերենիկ Բեջանյանը, Էդիկ Գրիգորյանը եւ Աշոտ Կնյազյանը դատապարտվեցին ցմահ ազատազրկման: Համվետ Ստեփանյանը դատապարտվեց 14 տարվա ազատազրկման: 3 տարի տեւած դատավարությունն այդպես էլ չկարողացավ կամ չցանկացավ վեր հանել ահաբեկչության կազմակերպիչներին եւ մինչ օրս էլ հասարակությունը լուրջ կասկածներ ունի կազմակերպիչների մասով: Շատերը այնգում են, որ դրա թիկունքում կանգնած է եղել իշխանության այն հատվածը, որը ահաբեկչությունից հետո ամբողջությամբ տեր դարձավ երկրի իշխանությանը:

*Լուրեր Հայաստանից - NEWS.am*

## 2014-10-10 / Մինսկում ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի միանալու մասին պայմանագիրը



Բելառուսի մայրաքաղաք Մինսկում ավարտվել է Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստը, որտեղ ի թիվս այլ փաստաթղթերի ստորագրվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրին Հայաստանի միանալու մասին պայմանագիրը: Նախագահ Սերժ Սարգսյանը ևս մեկ անգամ շնորհակալություն է հայտնել պետությունների ղեկավարներին՝ այդ գործընթացին քաղաքական աջակցության համար և վստահեցրել, որ Հայաստանը մեծ պատասխանատվությամբ կվերաբերի Եվրասիական տնտեսական միությանն անդամակցությանը: Նախագահը հույս է հայտնել, որ ԵՏՄ անդամ երկրների ղեկավարները կօգնեն իրենց ազգային խորհրդարաններում մինչև տարեվերջ վավերացնելու այդ պայմանագիրը, որպեսզի հաջորդ տարի հունվարի 1-ից Հայաստանը ևս սկսի իր աշխատանքը:

## Քաղմահագարանոց հանրահավաքի ժամանակ իշխանություններից պահանջեցին հեռանալ



Հոկտ. 24, 2014: Երեւանում անցկացվող քաղմահագարանոց ցույցի ամբիոնից իշխանություններից պահանջեցին հեռանալ: Ի տարբերություն ավելի վաղ ելույթ ունեցած ԲՀԿ ներկայացուցիչների՝ «Ժառանգություն» կուսակցության կառավարման խորհրդի փոխնախագահ Արմեն Մարտիրոսյանը հանդես եկավ Հայաստանի իշխանությունների հեռանալու անհրաժեշտության մասին կոչով:

Նրա խոսքով, դեռևս 2013 թվականի նախագահական ընտրությունների ժամանակ Հայաստանի ժողովուրդը դեմ քվեարկեց ներկա իշխանություններին, ավելին, անցած մեկուկես տարիներին հանրապետության ղեկավարությունն ամբողջությամբ տանուլ տվեց ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքական ասպարեզում:

«Այսօր մենք իշխանական ռեժիմի փոփոխություն պահանջելու իրավունք ունենք: Առաջին անգամ ԲՀԿ-ն, ՀԱԿ-ը եւ «Ժառանգություն»-ը կանգնած են ուսուսի տված՝ չնայած տարբեր գաղափարախոսություն են քարոզում: Երկիրը չափազանց ծանր վիճակում է, այդ պատճառով քաղաքական եւ հասարակական բոլոր գործիչները, որոնք իսկապես դեմ են հանդես գալիս իշխանություններին, պետք է միանան մեզ»,- նշեց Մարտիրոսյանը:

Իշխանությունների հեռացման գործընթաց սկսելու կոչով հանդես եկավ ՀԱԿ խորհրդարանական խմբակցության քարտուղար Արամ Մանուկյանը, ով շեշտադրեց աղետալի չափերի հասնող արտագաղթը, ինչն արդեն վտանգ է ներկայացնում ազգային անվտանգության համար:

Ելույթը նա ավարտեց՝ վանկարկելով «Մերժիկ, հեռացի՛ր», որին միացել է նաեւ ներկաների մեծամասնությունը:

*Լուսանկարը՝ Արսեն Սարգսյանի/NEWS.am*

## ԲՀԿ-ն խոստանում է թույլ չտալ իշխանության վերարտադրություն

Հոկտ. 24, 2014: Հայաստանի ներկա իշխանությունները չարաբաստիկ սահմանադրական բարեփոխումների միջոցով փորձում են վերարտադրել իրենց հաջորդ տասնամյակում, սակայն մենք ձեզ հետ միասին թույլ չենք տա դա անել: Այս մասին, այսօր՝ հոկտեմբերի 10-ին, եռյակի հանրահավաքում հայտարարել է ԲՀԿ խմբակցության քարտուղար Նաիրա Չոհրաբյանը: (Ֆոտոռեպորտաժ) Նրա խոսքով՝ տեսնելով խորհրդարանական եռյակի համախմբումը, իշխանությունները սկսեցին օգտագործել իրենց քաղաքական «հաճախորդների» ողջ զինանոցը,

որոնք ամեն կերպ փորձում են համոզել ժողովուրդին, որ ԲՀԿ-ն, ՀԱԿ-ն ու «Ժառանգությունը» հուսախար են անելու իրենց կողմնակիցներին:



«Սակայն այստեղ ամբիոնի մոտ կանգնած են արժանի քաղաքական առաջնորդներ, որոնք ձեզ հուսախար չեն անելու: Ներկա իշխանությունները իրենց քաղաքականությամբ հանգեցրել են նրան, որ ժողովուրդը զանգվածաբար լքում է Հայաստանը, եւ այդ գործընթացը պետք է կանգնեցնել»,-ասել է Չոհրաբյանը:

Անձնապես Մերժ Սարգսյանի հասցեին ուղղված քննադատությամբ հանդես եկավ Հայ ազգային կոնգրես խորհրդարանական խմբակցության ղեկավար Լեւոն Չուրաբյանը:

Նա 2008թ. սուր քաղաքական դիմադրության ժամանակ մարդկանց մահվան մեջ է մեղադրել պետության ղեկավարին՝ շրջանցելով այն փաստը, որ այդ ժամանակ «Քարգավան Հայաստանը» իշխանության կողմից է հանդես եկել:

Նրա խոսքով՝ Հայաստանի ժողովրդի համբերությունը եւ Մերժ Սարգսյանի հետագա իշխանությունը երկրի համար հղի են աղետալի հետեւանքներով: Իրավիճակից դուրս գալու միակ ելքը, ընդդիմադրի համոզմամբ, նախագահի հնարավորինս արագ հրաժարականն է:

*Լուսանկարը՝ Արսեն Սարգսյանի/NEWS.am*

## Երեւանում մեկնարկել է եռյակի կողմնակիցների քաղմահագարանոց երթը

Հոկտ. 24, 2014: Ազատության հրապարակում հանրահավաքի ավարտին ժամը 20:00-ին մեկնարկեց խորհրդարանական եռյակի կողմնակիցների երթը Երեւանի կենտրոնով:

Իրավապահները շարք են կազմել Մաշտոցի պողոտայի երթեւեկելի հատվածը բաժանող հատվածում՝ ցուցարարներին թույլ տալով փակել ճանապարհի աջ հատվածի երթեւեկությունը:

Երթը գլխավորում են խորհրդարանական եռյակի ղեկավարները. ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը, ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանը եւ «Ժառանգության» ղեկավար Բաֆֆի Հովհաննիսյանը:

Ցուցարարները հակակառավարական կարգախոսներ են վանկարկում՝ կոչ անելով Մերժ Սարգսյանին հեռանալ նախագահի պաշտոնից:





NEWS.am-ի թղթակցի փոխանցմամբ, ցուցարարների առաջին խմբերն արդեն Մաշտոցի պողոտայից թեքվում են դեպի Կորյունի փողոց: Երթն ընթանում է առանց միջադեպերի:

Երթի ավարտին խորհրդարանական եռյակի կողմնակիցները մտադիր են Թումանյան փողոցով վերադառնալ դեպի Ազատության հրապարակ: Քաղաքական ուժերի հետագա քայլերի մասին առայժմ չի հայտարարվել:

Լուսանկարը՝ Արսեն Սարգսյանի/NEWS.am

## Մահացած հայ գերու ընտանիքը դիմեց Եվրոպական դատարան



Ադրբեջանական գերության մեջ դաժան վերաբերմունքի ենթարկված տարեց հայ գյուղացի Մամիկոն Խոջոյանի գործը, հինգշաբթի օրը պաշտոնապես ուղարկվեց Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ): Խոջոյանի երեք զավակները գանգատ են ներկայացրել «Ընդդեմ իրավական կամայականության» ՀԿ եւ «Մարդու իրավունքների պաշտպանության եվրոպական կենտրոն»-ի աջակցությամբ:

«Մա առանձնահատուկ դաժանության վառ օրինակ է անօգնական 77-ամյա մարդու նկատմամբ», -ասաց ՄԻԳԵԿ իրավախորհրդատու Վահե Գրիգորյանը, ով ներկայացնելու է Խոջոյանի ընտանիքը Եվրոպական դատարանում: «Մենք աջակցում ենք մեր գործընկեր՝ ԸԻԿ-ին Ստրասբուրգում գտնվող Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առջև՝ Խոջոյանի ընտանիքի համար արդարության հասնելու նպատակով»:

«Խոջոյանը գերության սկզբից եւեթ ենթարկվել էր դաժան եւ վատ վերաբերմունքի, ինչը վերջնական արդյունքում հանգեցրեց նրա մահվան», -ասաց ԸԻԿ փաստաբան

Քրիստինա Գեորգյանը, -մենք դիմում ենք ՄԻԵԴ՝ Ադրբեջանի կառավարությանը պատասխանատվության կանչելու իր կատարած ծանր հանցագործության համար եւ ապահովելու, որ վերջ դրվի այդպիսի վերաբերմունքին: ՄԻԵԴ-ը քննարկելու է գանգատը ընդունելիության տեսանկյունից, որից հետո կարող է սկսվել դատական գործընթացը եւ կայացվել պարտավորեցնող վճիռ:

## Հայաստանի վարչապետն ընդդիմությանը

### «Նոր մարտի 1 եք ուզո՞ւմ»

01.10.2014



Անհասկանալի է, թե ինչ են ցանկանում ընդդիմության պատգամավորները: Այդ մասին Հայաստանի խորհրդարանում հոկտեմբերի 1-ին հայտարարել է վարչապետ Հովիկ Աբրահամյանը: Նրա խոսքով՝ նրանցից շատերի պահվածքը նույնիսկ մեծ ցանկության դեպքում հնարավոր չէ անվանել ձգտում կառուցողական երկխոսության:

Նա նշել է, որ ընդդիմությունը հաճախ կառավարության առաջարկությունները դիմավորում է ոչ թե փաստարկներով, այլ կրքերի բորբոքմամբ, որը ցանկանում է խորհրդարանի դաշինքի սահմաններից դուրս հանել: Տպավորություն է ստեղծվում, որ ընդդիմությունը 2008թ.-ի մարտի 1-ի դեպքերի կրկնությունն է ցանկանում, հավելել է վարչապետը:

«Դուք դա եք ուզո՞ւմ: Մենք չենք հասկանում, թե ինչու է դա ձեզ հարկավոր: Դուք խոսում եք արտագաղթի մասին, սոցիալական հարցերի, աղքատության մասին: Եկեք միասին աշխատենք: Միգուցե, շատ խելացի գաղափարներ առաջարկեք: Միգուցե, մեկ ամսվա ընթացքում կօգնեք երկիրը դուրս բերել սոցիալական եւ տնտեսական բարդություններից: Եթե ինչ-որ գաղափարներ ունեք, մենք պարզապես ուրախ կլինենք», - հայտարարել է Աբրահամյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հարկավոր է լկտի պատգամավորներին կարգի հրավիրել. Վարչապետը Արամ Մանուկյանի մասին

01.10.2014

Հարկավոր է նման լկտի պատգամավորներին կարգի հրավիրել, որ իրենց չափը ճանաչեն: Այս մասին վարչապետ Հովիկ Աբրահամյանը՝ ԱԺ-կառավարություն հարցուպատասխանի ժամանակ անդրադառնալով հանրահավաքի ժամանակ ՀԱԿ խմբակցության

պատգամավոր Արամ Մանուկյանի կողմից նախագահի հասցեին արված հայիոյանքին:



«Օգտվելով առիթից ուզում եմ ասել՝ ուղղակի ցավում եմ, որ մեր գործընկեր պատգամավորը դահլիճում չէ եւ ընդհանրապէս կոռեկտ չեմ համարում, որ պատգամավորները գնում են միտինգներին հայիոյում են երկրի ղեկավարին, վարչապետին:  
Հարկավոր է նման լիտի պատգամավորներին կարգի հրավիրել, որ իրենց չափը ճանաչեն: Ձեր արժեքը գինը, դուք պիտի գնահատեք, հասկանաք: Հերիք է այս դահլիճում, փողոցում մարդկանց վիրավորեք»,- ասաց վարչապետ Հովիկ Աբրահամյանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Շուտով Հայաստանն ու ԵՄ-ն հարաբերությունների նոր փաթեթ կունենան. Հրիսթեան

01.10.2014



Մոտ ապագայում Հայաստանն ու Եվրամիությունը հարաբերությունների նոր փաթեթ կունենան: Այս մասին, այսօր՝ հոկտեմբերի 1-ին, լրագրողների հետ զրույցում նշել է Հայաստանում ԵՄ պատվիրակության ղեկավար Տրայան Հրիսթեան՝ հավելելով, որ կարելի է նաև թե՛ ժամկետները, այլ փաթեթի բովանդակությունը:  
Նա հույս է հայտնել, որ Հայաստան-ԵՄ համագործակցության խորհրդի հաջորդ նիստում հստակ պատկեր կլինի խնդրի վերաբերյալ:

## Ամենայն հայոց կաթողիկոսն առաջին անգամ այցելել է Մյանմար

02.10.2014



Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Բ-ն առաջին անգամ այցելել է Մյանմար, հայտնում է The Irrawaddy-ին: Այցի հիմնական նպատակը հայկական եկեղեցու դիրքերի ամրապնդումն է եւ Մյանմարում հայ համայնքի ժառանգության պահպանմանն աջակցելը, նշում է հրատարակչությունը՝ վկայակոչելով հայկական պատվիրակության հայտարարությունը:

Յանգոն քաղաքի կենտրոնում, որը նախկինում Ռանգուն էր կոչվում, գտնվում է Սբ. Հովհաննես Մկրտչի հայկական եկեղեցին: Եկեղեցին կառուցվել է 1862 թ.՝ հայ համայնքի ջանքերով: Ըստ եկեղեցական գրառումների՝ Մյանմարում բնակվել են հարյուրավոր հայեր: 1881 թ. նրանց թիվը կազմել է 466, իսկ տասը տարի անց՝ 1295: Մակայն այժմ երկրում բնակվում են երկու-երեք տասնյակից ոչ ավելի հայ, այն էլ՝ խառը ընտանիքներ: Վերջին գտարյուն հայը մահացել է անցյալ տարի: Եկեղեցու հավատացյալներից Ռեյչել Մինուսը հայտնել է, որ չգիտի, թե որքան հայեր են ապրում Յանգոնում, սակայն հուսով է, որ կաթողիկոսի այցը նրանց բոլորի համախմբելու առիթ կդառնա: «Կարծում եմ, որ նրանք կզան խոնարհվելու կաթողիկոսին: Այսպես մենք գոնե կիմանանք, թե որքան ենք այստեղ մնացել», - հավելել է նա: Նրա հայրը՝ 60-ամյա Ռիչարդ Մինուսը թերթին հայտնել է, որ կաթողիկոսին կիսնդրի եկեղեցի ուղարկել հայ հոգևորականի:

## Իրանցի գործարարները ներդրումներ կանեն բենտոնիտի արտադրության ոլորտում

01.10.2014

Հայաստանում է Իրանի Իսլամական Հանրապետության «Մուքարար ինդուսթրիալ գրուպ» ընկերությունների խումբը պատրաստ է լուրջ ներդրումներ կատարել Հայաստանում տարբեր բնագավառներում, հատկապես բենտոնիտի արտադրության ոլորտում:

ՀՀ առևտրաարդյունաբերական պալատի լրատվական ծառայությունից հայտնում են, որ հայաստանյան բենտոնիտի հումքը աշխարհում լավագույններից է եւ կարող է «ՋԻ-ՄԻ-ԷԼ» մեկուսիչ արտադրատեսակների հիմնական քաղադրամասը դառնալ:





Իրանցի գործարարները մտադրություն ունեն մասնավորապես բենտոնիտի գործարանի բազայի վրա ստեղծել ժամանակակից արտադրություն: Հայաստանի առևտրաարդյունաբերական պալատը միջնորդ դեր է ստանձնել ներդրում կատարողների և գործարանի սեփականատերերի միջև:  
Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Հովիկ Աբրահամյանը «Հայաստան-Սփյուռք» հինգերորդ համաժողովում մեջբերել է Նժդեհին

19.09.2014



Վարչապետ Հովիկ Աբրահամյանը Երեւանի Ալեքսանդր Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում մասնակցել է «Հայաստան-Սփյուռք» հինգերորդ համաժողովի բացմանը: Ողջունելով ներկաներին՝ կառավարության ղեկավարը, մասնավորապես, նշել է.

«Միրելի՛ հայրենակիցներ, հոգեւոր հայրեր, տիկնայ՛ք եւ պարոնայ՛ք


Անչափ ուրախ եմ այսօր ողջունել ձեզ այս ջերմ, հայաշունչ միջավայրում, հանդիպել մեր բազմաբովանդակ Սփյուռքի հայկական կառույցների ղեկավարներին և համայնքային պատվիրակներին:

Ուրախ եմ նաեւ, որ պատեհ առիթ է ստեղծվել ձեզ հետ միասին կրկին գնահատելու և արժեւորելու Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության գործակցության անցյալն ու ներկան, հստակեցնելու առաջնահերթությունները, ինչպես նաեւ մտքեր փոխանակելու մեր Հայրենիքի եւ ազգի համար օրակարգային հարցերի շուրջ:

Այս եռամիասնության մեջ է մեր հաջողության միակ գրավականը: Հայոց նորագույն պատմությունը վկայում է, որ միայն միասնական ջանքերի շնորհիվ ենք մենք ի գորու հաղթահարելու համայն հայության առջև ծառայած ներքին և արտաքին մարտահրավերները:

Դիպուկ են Գարեգին Նժդեհի խոսքերը. «Մեր ժողովուրդն առանց հայրենասիրության այն է, ինչ մի մարմին՝ առանց հոգու»: Ուստի, մենք հզորանալու ենք մեր

համախմբվածությամբ, մեր միասնությամբ, համագային խնդիրների լուծմանը միտված մեր հաստատակամությամբ: Հայաստանն ուժեղ է ու անպարտելի իր երկու թելերի և միասնական Սփյուռքի շնորհիվ: Մենք Հայաստանում մեզ ավելի գորեղ ենք զգում՝ թիկունքում ունենալով Սփյուռքի ներուժը: Վստահ եմ, որ նույն կերպ դուք էլ ընկալում եք Հայաստանի Հանրապետությունը՝ ձեր անկախ ու ազատ Հայրենիքը: Մենք չունենք և չենք կարող ունենալ առանձին հատվածական շահեր: Մեր շահերը փոխկապակցված են, իսկ մեր գործողությունները պետք է լինեն համաձայնեցված և փոխլրացնող:



«Հույս»-ի Խմբագիրը համաժողովում

Կարելուրելով Հայաստան – Սփյուռք համագործակցությունը 2008թ. հոկտեմբերի 1-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծեց Սփյուռքի նախարարություն, որով սկսվեց Հայրենիք-Սփյուռք հարաբերությունների զարգացման որակապես նոր փուլ: Ուրախալի է, որ անցած տարիների ընթացքում նախարարությանը հաջողվել է գործընկերային կապեր հաստատել Սփյուռքի բոլոր կառույցների հետ: Նախարարության գործունեության նկատմամբ վստահության ապացույցն է կազմակերպված այս, եւ այլ համաժողովներին, միջոցառումներին Սփյուռքի ակտիվ ներգրավվածությունը և մասնակիցների թվի շարունակական ավելացումը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Եգիպտոսի 45-50 հազարանոց հայ համայնքից 5 հազար մարդ է մնացել, Իրաքում՝ 10 հազար

20.09.2014



Սեպտեմբերի 20-ին «Հայաստան-Սփյուռք» համահայկական հիմնադրոքը համաժողովը շարունակեց իր աշխատանքները չորս թեմատիկ նիստերով:

Սիրիահայ համայնքի հիմնախնդիրներին նվիրված թեմատիկ երկրորդ նիստում քննարկվեցին պատերազմի հետևանքով Լիբանան եւ Հայաստան տեղափոխված սիրիահայերի հիմնախնդիրները, Հայաստանում պետական պատկան մարմինների, ինչպես նաեւ համահայկական ու բարեգործական կազմակերպությունների ներկայացուցիչները ներկայացրին Հայաստանում սիրիահայերի աջակցության ծրագրերը, վերհանվեցին հիմնական խնդիրներն ու դրանց լուծման հնարավոր մեխանիզմները:

Անդրադարձան նաեւ վտանգված այլ համայնքների՝ Իրաքի, Եգիպտոսի հիմնախնդիրներին: Նիստավար Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Բերիո Հայոց թեմի առաջնորդ, բարձրաշնորհ տեր Շահան արքեպիսկոպոս Սարգիսյանը նիստը սկսեց Տերունական աղոթքով:

Շնորհակալություն հայտնելով ՀՀ սփյուռքի նախարարությանը համաժողովը կազմակերպելու համար՝ Կահիրեի թեմական ժողովի անդամ, ՀՅԴ անդամ, «Լուսաբեր» մշակութային ընկերակցության առենապետ Սուրեն Բայրամյանը ներկայացրեց «Իրավիճակը Եգիպտոսում»: Չուգահեռներ անցկացնելով սիրիական դեպքերի հետ՝ զեկուցողը մասնավորապես նշեց, որ քաղաքական զարգացումների պատճառով այսօր համայնքի կարեւորագույն մտահոգությունը անորոշությունն է: Եգիպտոսի 45-50 հազարանոց համայնքից 5 հազար մարդ է մնացել:

Իրաքահայ հասարակական գործիչ Պարույր Հակոբյանը ներկայացրեց իրավիճակը Իրաքում, որտեղ մնացել է ընդամենը 10 հազար մարդ, հիմնականում Բաղդադ եւ Բասրա քաղաքներում: Նշելով հոգեւոր եւ համահայկական կառույցների, հայոց պետության աջակցության մասին՝ զեկուցողը մասնավորապես նշեց. «Միասնաբար պետք է մտածենք, թե ինչպես կարելի է ապահովել Միջին Արեւելքի համայնքներից արտագաղթածների հայ մնալը:

«Հալեպ» հասարակական կազմակերպության գործունեությունը ներկայացրեց Ծովիկ Մակարյան-Բայթարյանը: Կազմակերպությունը Հայաստանում գրանցվել է մեկ տարի առաջ, եւ նպատակն է նյութաբարոյական աջակցություն ցուցաբերել սիրիահայերին, բնակարաններ տրամադրել եւ կասեցնել Հայաստանից սիրիահայերի արտագաղթը, որ Սիրիայում խաղաղություն հաստատվելուց հետո կարողանան վերադառնալ Սիրիա եւ մասնակցել համայնքի վերակառուցմանը:

Հայաստանում բնակվող սիրիահայերի աջակցության նպատակով իրականացված աշխատանքների վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» հասարակական կազմակերպության նախագահ Լենա Հալանյանը: Չեկուցողը կարեւորեց սիրիահայերի համար կառուցվող «Նոր Հալեպ» թաղամասի կառուցումը:

Սկսելով քննարկումը եւ մտքերի փոխանակությունը՝ նիստավար Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Բերիո Հայոց թեմի առաջնորդ, բարձրաշնորհ տեր Շահան արքեպիսկոպոս Սարգիսյանը շնորհակալություն հայտնեց բոլոր կազմակերպություններին, կառույցներին ու անհատ բարերարներին, եւ մասնավորապես նշեց. «Այսօր ամենակարեւոր երեւույթը միասնականությունն է: Պետք է նոր մոտեցումով մարմին ստեղծել, որի նպատակը սիրիահայերի գոյատևումն է Հայաստանում եւ այլ երկրներում:

Քննարկման արդյունքում նիստի մասնակիցները առաջարկեցին ստեղծել Ազգային մարմին՝ ՀՀ պետական պաշտոնյաների, հոգեւոր կառույցների, համահայկական կազմակերպությունների ղեկավարների մասնակցությամբ, որը կաջակցի քաղաքական անկայուն իրավիճակներում գտնվող երկրների հայ համայնքներին, կորոշի առաջնահերթությունները եւ կմշակի արագ արձագանքման ռազմավարությունն ու կիրականացնի կազմակերպչական աշխատանքները:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Գիտությունը լույս է սփռել Ուրարտուի սոցիալ-մշակութային կյանքի վրա



Հնագետները բացահայտել են օբյեկտներ, որոնք լույս են սփռում Ուրարտուի սոցիալական եւ մշակութային կյանքի վրա, գրում է «Գիտություն եւ կյանք» ամսագիրը:

Աղբյուրը նշում է, որ պեղումները կատարվում են Վանա բերդի հյուսիսային կողմում գտնվող բլրի վրա: Հնագետները 5 տարվա ընթացքում այնտեղ հայտնաբերել են տարբեր ժամանակաշրջանների գտածոներ. 3 հազար տարեկան կառքերի մոդելներ, հազվագյուտ անոթներ, 5 հազար տարի առաջ օգտագործված շարժական օջախ եւ 2,7 հազար տարեկան զարդեր: Այս տարի ամենակարեւոր գտածոները բրոնզե մամլիչներն են, կավե ցուցանակը եւ քաղաքացիների տները:

Հնագետների հայտնաբերած տներում գտնվել են վառարաններ եւ մթերքների մնացորդներ: Տները մեկ նախագծով չեն կառուցված եղել. Իրանք այնպես են կառուցել, որպեսզի համապատասխանեն մարդկանց պահանջներին: Տների ճարտարապետությունը ցույց է տվել, որ դրանք պատկանել են թագավորական ընտանիքին սպասարկող անձանց:

Աղբյուրը նշում է, որ Ուրարտու պետությունը գոյություն է ունեցել մ. թ. ա. IX-VI դդ.: Իր ծաղկման շրջանում այն ընդգրկել է ողջ Հայկական լեռնաշխարհը: Վանը եղել է պետության մայրաքաղաքը:

## Իրանի նախագահ. պատրաստակամ ենք օժանդակել հայկական կողմի նախաձեռնություններին

20.10.2014

Իրանի Իսլամական Հանրապետության նախագահի նստավայրում այսօր կայացել է ՀՀ վարչապետ Հովիկ Աբրահամյանի եւ ԻԻՀ նախագահ Հասան Ռոհանիի հանդիպումը: ՀՀ կառավարության ղեկավարը նշել է, որ Իրան կատարած պաշտոնական այցը կնպաստի հայ-իրանական տնտեսական կապերի աշխուժացմանը, նոր ներդրումների ներգրավմանը:

«Հայաստանում բարձր են գնահատում Իրանի Իսլամական Հանրապետության հետ ձեւավորված սերտ, բարիդրացիական հարաբերությունները, որոնք խարսխված են մեր ժողովուրդների միջեւ դարավոր բարեկամության

հիմքերի վրա: Հայ-իրանական հարաբերությունները գտնվում են բարձր մակարդակի վրա եւ շարունակում են զարգանալ փոխվստահության մթնոլորտում: Ձեռք բերված պայմանավորվածությունները հիմնականում իրականացվում են, ինչը վկայում է երկու երկրների միջեւ առկա բարեկամական եւ գործնական կապերն ավելի խորացնելու երկուստեք վճռականության մասին»,-ասել է Հովիկ Աբրահամյանը:



Հասան Ռոհանին, ողջունելով Հայաստանի վարչապետ Հովիկ Աբրահամյանի այցը ԻԻՀ, նշել է, որ այն կնպաստի հայ-իրանական բարեկամական հարաբերությունների հետագա խորացմանը տարբեր բնագավառներում: ԻԻՀ նախագահի խոսքով, Իրանը պատրաստակամ է օժանդակել հայկական կողմի նախաձեռնություններին, ինչպես նաեւ համատեղ ծրագրերի իրականացմանը: Չրուցակիցները կարելուրել են մի շարք ոլորտներում, մասնավորապես, էներգետիկ, գյուղատնտեսական, մշակութային համագործակցության խորացումն ու ընդլայնումը:

Վարչապետ Հովիկ Աբրահամյանը նշել է, որ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը հնարավորություն է ընձեռում ստանձնել այդ կառույցի անդամների եւ օտարերկրյա գործարար համայնքների համար կապող օդակի դերակատարություն: Կառավարության ղեկավարն ընդգծել է, որ Հայաստանում նպաստավոր պայմաններ են ստեղծվել ներդրումների համար:

Իրանի նախագահը բարձր է գնահատել հայ համայնքի դերակատարությունը երկրի տարբեր ոլորտների զարգացման գործում:

Կողմերն անդրադարձել են Լեռնային Ղարաբաղի եւ տարածաշրջանային խնդիրներին: Վարչապետ Աբրահամյանը նշել է, որ Հայաստանը հետամուտ է միայն խաղաղ ճանապարհով խնդրի կարգավորմանը ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակում: Երկուստեք ընդգծվել է տարածաշրջանային հակամարտությունների խաղաղ կարգավորման կարևորությունը եւ տարածաշրջանում կայունության ապահովման անհրաժեշտությունը:

Հովիկ Աբրահամյանը Հասան Ռոհանիին է փոխանցել ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրավերը՝ ներկա գտնվելու 2015 թ. ապրիլի 24-ին Երեւանում կայանալիք Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի ոգեկոչման արարողությանը:

Իրանի նախագահն իր հերթին ՀՀ նախագահին ու հայ ժողովրդին է փոխանցել իր ջերմ բարեմաղթանքները:

Հանդիպման ընթացքում Հովիկ Աբրահամյանն Իրանի նախագահի հետ քննարկել է երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

## Արցախ

### Ֆրանսուա Ռոշբլուան. Եվրոպան պետք է սովորի ճանաչել Լեռնային Ղարաբաղը

23.10.2014



Ֆրանսիա-Ղարաբաղ բարեկամության շրջանակը ողջունել է Եվրախորհրդարանում Լեռնային Ղարաբաղի հետ բարեկամության խմբի ստեղծումը:

Բյուսելում ԼՂՀ անկախության 23-րդ տարեդարձին նվիրված հանդիսավոր միջոցառումը համախմբել էր Եվրախորհրդարանի մեկ տասնյակից ավելի պատգամավորների, Բյուսելում տեղակայված միջազգային եւ համայնքային նշանակության մի շարք կառույցների պատասխանատուների:

Միջոցառմանը, որի գլխավոր բանախոսը Արցախի Ազգային ժողովի նախագահ Աշոտ Ղուլյանն էր, ելույթ է ունեցել նաև Եվրախորհրդարանի լուսնաբուրգի պատգամավոր Ֆրանկ Էնգելը: Վերջինս, ողջունելով ԼՂՀ անկախության հերթական տարեդարձը՝ հայտարարել է Եվրախորհրդարանում Արցախի հետ բարեկամության խմբի ձևավորման մասին:

«Սա ճիշտ ուղղությամբ արված կարևոր քայլ է. եվրոպական հաստատություններում Լեռնային Ղարաբաղին առավել մեծ ներկայությունը նպաստելը նշանակում է նպաստել այդ հաստատությունների կողմից այս երկրի իրականությունը առավել հիմնավոր կերպով ճանաչելուն» - մեկնաբանել է Ֆրանսիա-Ղարաբաղ բարեկամության շրջանակի նախագահ Ֆրանսուա Ռոշբլուանը:

Անդրազգային այս խմբի նպատակը ճանաչողական այցերի միջոցով եվրոպական և դարաբաղյան քաղաքացիական հասարակությունների միջև հարաբերությունների հաստատմանը նպաստելն է, ինչպես նաև եվրոպական և միջազգային հաստատություններում Լեռնային Ղարաբաղի ներկայությունն ամրապնդելը:

«Մեր ժամանակաշրջանում այլևս անհնար և ապօրինի են որևէ երկրի՝ արտաքին աշխարհի հետ հաղորդակցությունը խանգարելու փորձերը»,- նշել է Ֆրանսուա Ռոշբլուանը: «Եվրոպան պետք է սովորի ճանաչել Լեռնային Ղարաբաղը: Ծանոթանալով երկրին՝ Բյուսելն այն կճանաչի»,- եզրափակել է նա:

Լուրեր Հայաստանից - NEWS.am



## Արցախում մելիք Եզանի պալատը զբոսաշրջիկների կհյուրընկալի



Արցախի Տոդ գյուղում գտնվող մելիք Եզանի պալատը բաց կլինի զբոսաշրջիկների համար, NEWS.am-ի թղթակցին հայտնել է ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության վարչության պետ Մերգեյ Շահվերդյանը: Ըստ նրա՝ արդեն գրեթե ավարտվել է պալատի շրջակայքի բարեկարգումը եւ ցանկապատումը: «Հենց Տոդ գյուղում հոկտեմբերի 18-ին կկայանա գինու առաջին արցախյան փառատոնը, որի մասին արդեն տեղեկացրել ենք», – հավելել է Շահվերդյանը:

Մասնակի վերականգնվել է նաև պալատի ներքին հարդարանքը. դրա ընդունարանում նախատեսվում է թանգարան հիմնել: Իսկ մյուս տարի վերականգնողական աշխատանքները կշարունակվեն մյուս շինություններում: Ինչ վերաբերում է զբոսաշրջիկների հյուրընկալելու հնարավորությանը, գյուղի մոտակայքում՝ Ստեփանակերտից 57 կմ հեռավորության վրա, արդեն երկու տարի է հյուրանոց է գործում: «Եթե գյուղացիները ցանկանան իրենց տներում bed & breakfast («անկողին եւ նախաճաշ») հյուրասենյակներ բացել, մենք միայն ուրախ կլինենք: Մենք նրանց շրջանում հնչեցրել ենք այս գաղափարները, եւ հուսով ենք, որ երբ զբոսաշրջիկները շատանան, կհայտնվեն գյուղական առաջին b&b-ները», – հավելել է Շահվերդյանը:

Լեռնային Ղարաբաղի հարավային զբոսաշրջային երթուղում Չրոսաշրջության վարչությունն ավարտել է Մարտունու շրջանի Մխտորաշեն գյուղում երկու հազար տարեկան չինարիի շրջակայքի բարեկարգումը: Նույն շրջանի հանրահայտ Ամարասի վանքում շարունակվում են վերականգնողական աշխատանքները: «Ինչպես հիշում եք, մենք այնտեղ հայտնաբերել ենք Գրիգորիս եպիսկոպոսի (Գրիգոր Լուսավորչի թոռը) գերեզմանի մի նոր մաս: Այժմ մշակում ենք պեղած մասի պահպանման ծրագիր», – նշել է Շահվերդյանը:

Մելիք Եզանի պալատը թվագրվում է 1730-ականներով, երբ Արցախում Պարսից շահի տիրապետության տակ կիսանկախ իշխանություն էր ստեղծվում: Մելիք Եզանի կառավարման տարիներին միավորված են եղել պատմական Արցախի եւ դրանից հարավ մինչեւ Արաքս գետի հատվածն ընկած հողատարածքները:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Արեւմտյան Հայաստան

### Մուշում հայերը միություն են ստեղծել



Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Մուշ քաղաքում հայերը միություն են բացել:

Թուրքական Samanyolu-ի փոխանցմամբ՝ Մուշում հայերը ստեղծել են Տարոն-Մուշ հայերի փոխօգնության, սոցիալական եւ տուրիզմի միություն:

Միության գրասենյակը գտնվում է Մուշի Սարայ թաղամասում՝ Մուշի ավտոկայանի դիմաց: Մուշի հայերի միության հանդիսավոր բացմանը մասնակցել են թե Մուշում ապրող, թե Միյուռքում ապրող մշեցիների ժառանգներ:

Մուշի հայերից Արմեն Գալուստյանը նշել է, թե միության ստեղծման նպատակը ազգերի միջեւ խաղաղություն ապահովելն է:

Մուշի հայերի միության բացմանը մասնակցել են նաև ընդդիմադիր Ժողովրդահանրապետական կուսակցության անդամները:

### Մուշում ստեղծված հայերի միությունը առաջիկայում նախագահ է ընտրելու

25.09.2014

Ներկայում Թուրքիայի կազմում գտնվող Մուշ քաղաքում օրեր առաջ ստեղծված հայերի միությունը պատրաստվում է առաջիկա շաբաթ ընտրել միության նախագահ:

Ինչպես տեղեկացնում է Ստամբուլի հայկական «Ակոսը», Մուշում ստեղծված «Տարոն-Մուշ հայերի փոխօգնության, սոցիալական եւ տուրիզմի միությունն» արդեն ընտրել է 7 հոգուց բաղկացած ղեկավար մարմին եւ պաշտոնապես գրանցման համար արդեն դիմում է ներկայացրել:

Մուշի հայերի միության անդամները պատրաստվում են նաև առաջիկա շաբաթ ընտրել միության նախագահ:

Միության ղեկավար մարմնի անդամ, Մուշում բնակվող Արմեն Գալուստյանը «Ակոս»-ի հետ գրույցում նշել է, թե դժվար է եղել Մուշում հայերի միություն հիմնել, սակայն հիմնումից հետո բազմաթիվ դրական արձագանքներ են ստացել:

Նա նշել է, թե իրենց միության առաջին գործն է եղել Մուշում գտնվող հայերին պատկանող մշակութային կառույցների պահպանման համար աշխատանքներ սկսելը: «Միությունը

ցանկանում է, որ Մուշի հայկական եկեղեցին իրենց հանձնվի, որպեսզի կարողանանք վերանորոգել այն: Այդ նպատակով բանակցում ենք քաղաքապետարանի հետ: Բացի այդ, կարողացել ենք պահպանության տակ առնելու համար գրանցել հայկական գերեզմանոցը»,-շեշտել է Արմեն Գալուստյանը՝ հիշեցնելով, որ իրենց ծրագրերի մեջ է մտնում նաև միության համար նոր շենքի կառուցումը եւ հայերեն դարձնելու կազմակերպումը:

Նշենք, որ 2014-ի սեպտեմբերի 11-ին, Մուշում տեղի է ունեցել հայերի միության բացման արարողությունը, որին մասնակցել են նաև Սփյուռքից ժամանած հայեր եւ Թուրքիայի «Ժողովրդա-հանրապետական» կուսակցության մի շարք անդամներ:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Թուրքիայում վաճառքի հանված հին հայկական գյուղի հողերն արագ վաճառվում են

01.10.2014



Թուրքիայում օրեր առաջ Բուրսա նահանգի Օրհանգազի շրջանի Քարսաք գյուղի վաճառքի եւ նրա հարեւանությամբ հայերին պատկանած բնակատեղիի հայտարարությունից հետո շրջանում անշարժ գույքի գներն աճել են 10 անգամ:

Թուրքական Sabah պարբերականի փոխանցմամբ՝ Բուրսա նահանգի Քարսաք եւ Գյուվենլի գյուղերի հողատարածքները վերջին օրերին արագ վաճառվում են, քանի որ անշարժ գույքի մի գործակալություն հայտարարություն էր տարածել՝ նշելով. «Վաճառվում է հին հայկական գյուղ առանց միջնորդի» եւ «Վաճառվում է հին հայկական բնակատեղի»:

Անշարժ գույքի գործակալ Էյուսի Բայրաքը նշել է, թե Քարսաք գյուղում, որտեղ մինչև 1915-ը հայեր են ապրել, անշարժ գույքի գները շատ են թանկացել: Նա շեշտել է, թե այս պահին վաճառվել է գյուղի հողերի 95 տոկոսը:

Գյուվենլի գյուղի գյուղապետը նշել է, թե անշարժ գույքի գործակալությունը իրենց գյուղի համար եւս նշել է հայկական անունը, որը իրականությանը չի համապատասխանում, քանի որ միայն Քարսաքում են հայեր ապրել: Ըստ գյուղապետի՝ անշարժ գույքի գործակալությունը ցանկացել է գանձագողերի ուշադրությունը հրավիրելու համար իրենց գյուղին եւս տալ հայկական անունը եւ թանկ վաճառել հողերը:

Նշենք, որ օրեր առաջ Թուրքիայում անշարժ գույքի գործակալություններից մեկը «Վաճառվում է հին հայկական գյուղ առանց միջնորդի» եւ «Վաճառվում է հին հայկական

բնակատեղի» անուններով հայտարարություններ էր տարածել ինտերնետում:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Արեւմտյան Հայաստանում Ցեղասպանությանը նվիրված գիտաժողով է լինելու Արագած Ախոյան 30.09.2014



Արեւմտյան Հայաստանի Մուշ քաղաքում բնակվող հայերի միակ ցանկությունը հայերենի ուսուցիչ ունենալն է: Այս մասին այսօր՝ սեպտեմբերի 30-ին, լրագրողների հետ զրույցում ասաց Ազգային ժողովի ԲՀԿ խմբակցության պատգամավոր Արագած Ախոյանը, որն օրեր առաջ է վերադարձել Մուշից, որտեղ կա արդեն հայկական համայնք: «Բացի մշեցիների հետ հանդիպումներից՝ մենք հանդիպել ենք նաև Վանի, Դիարբեքրի, Տիգրանակերտի քաղաքապետներին: Վերջին երկու քաղաքապետները նոր էին ընտրվել, բայց նորից նույն կուսակցությունից էին: Նրանք խոստացան, որ լինելու են ավելի ակտիվ, քան նախկինում էր: Ինչ վերաբերվում է Մուշի հայկական համայնքին, ապա մեծ դժվարությամբ այն ստեղծվեց», - ասաց պատգամավորը:

Նրա խոսքով՝ Արեւմտյան Հայաստանում այժմ պատրաստվում են մեծ գիտաժողովի, որը նվիրված է լինելու Հայոց Ցեղասպանության 100-րդ տարելիցին. «Լեզուն հայերենն է լինելու, Արեւմտյան Հայաստանի ամենամեծ քաղաքներից մեկում, ավելին ասել այս պահին չեմ կարող»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Թուրքիայի հայ համայնքին վերադարձվել է 42.000 քմ տարածք Ստամբուլում. Ermenihaber

26.09.2014

Թուրքիայի հիմնադրամների գլխավոր խորհուրդը որոշում էր կայացրել Ստամբուլի Չեյթինբուրնու շրջանից նախկինում հայապատկան 42.000 քմ տարածքը վերադարձնել հայկական «Սուրբ Փրկիչ եկեղեցու հիմնադրամ»-ին: Այդ տարածքի մեջ մտնում են նաև Չեյթինբուրնուի մարզահամալիրը, ֆուտբոլային մարզադաշտը, վիթխարի ավտոպարկը, հայտնում է [Ermenihaber.am](http://Ermenihaber.am)-ը:

Չեյթինբուրնուի քաղաքապետարանն ընդդիմացել էր Հիմնադրամների խորհրդի ընդունած որոշմանը՝ ճանաչելով այն ապօրինի: Հայցով դիմել է դատարան: Ինչպես



տեղեկացնում է թուրքական «Կայթան» պարբերականը, դատարանը չի բավարարել քաղաքապետարանի հայցը՝ որոշում կայացնելով հայկական հիմնադրամի օգտին:



«Մուրբ Փրկիչ եկեղեցու հիմնադրամ»-ի նախագահ Պետրոս Շիրիսոյուն նշել է, որ վերադարձված տարածքը գնահատվում է մոտավորապես 338 մլն լիրա (շուրջ 180 մլն դոլար): Ըստ Շիրիսոյունի՝ վերադարձված տարածքում հնարավոր է կառուցվի բիզնես-կենտրոն, ամենտրի կենտրոն կամ հյուրանոց: Հարցը դեռ քննարկման կղզիվի հիմնադրամի գործադիր խորհրդի նիստում: Բայց այնուամենայնիվ, ինչ էլ որ կառուցվի, ստացված շահույթը ծառայեցվելու է Մուրբ Փրկիչ հիվանդանոցի եւ հայկական համայնքի կարիքներին: Ձեյթինբուրնուի նշյալ տարածքը հայկական համայնքից խլվել էր դեռեւս 1964 թվականին: Այն ժամանակ հայկական համայնքը դիմել էր դատարան, բայց հաջողության չէին հասել: Ձեյթինբուրնուի քաղաքապետարանը դատարանի միջոցով կարողանում է 1987-ին իր հաշվեկշռի մեջ գրանցել Թուրքիայի Հիմնադրամների խորհրդի ենթակայության տակ անցած հայկական տարածքը: Եվ վերջապես այժմ այն արդեն վերադարձվել է իր իսկական տերերին: Հիշեցնենք, որ 2011-ի օգոստոսի 28-ին Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ստորագրել է դեկրետ, համաձայն որի նախկին տերերին պետք է վերադարձվեն 1930-ականներից հետո բռնագավթված քրիստոնեական եւ հրեական եկեղեցիների ունեցվածքը՝ հիվանդանոցներ, մանկատներ, դպրոցներ եւ այլ տեսակի անշարժ գույք:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Առաջին անգամ Ղուրանը թարգմանվել է արեւելահայերենով եւ արեւմտահայերենով

25.09.2014

Անկարայի համալսարանի լեզվի, պատմության եւ աշխարհագրության ֆակուլտետի հայոց լեզվի բաժնի ասպիրանտ Յավուզ Այդրնի նախաձեռնությամբ արեւելահայերենով եւ արեւմտահայերենով է թարգմանվել մուսուլմանների սուրբ գիրքը՝ Ղուրանը: Թուրքական Rotahaber կայքի փոխանցմամբ՝ Յավուզ Այդրնը նշել է, թե Ղուրանի թարգմանության նպատակը եղել է աշխարհի հայերին իրենց լեզվով ներկայացնել իսլամի մայր աղբյուրի՝ Ղուրանի գեղեցկությունը, նրանում ներկայացվող հանդուրժողականությունն ու աշխարհին տրված ուղերձները:



Յավուզ Այդրնի խոսքով՝ Ղուրանի թարգմանությունն ու մեկնությունն արվել է արեւելահայերենով եւ արեւմտահայերենով:

Գրքի խմբագիրն է Ստամբուլի հայկական «Ակոս» պարբերականի հայկական էջերի համակարգող Բագրատ Էստուկյանը:

Նշվում է, որ Ղուրանի թարգմանությունն ու մեկնությունն ընդհանուր կազմելու են 10 հատոր՝ 2 500 էջերով:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Միլիոնը

## Մարտին Փարիզում Ցեղասպանության վերաբերյալ իրավական պահանջներ կներկայացվեն

20.10.2014



Մարտին նախատեսված «Արեւմտահայերի ազգային համագումար» միջազգային հասարակական կազմակերպության 4-րդ համագումարին Փարիզում Հայոց ցեղասպանության վերաբերյալ մշակված իրավական պահանջներ կներկայացվեն: Այդ մասին NEWS.am-ի եւ Tert.am-ի թղթակիցների հետ զրույցի ընթացքում հայտարարեց Հայաստանում «Արեւմտահայերի ազգային համագումար» միջազգային հասարակական կազմակերպության նախագահ, ԲՀԿ խմբակցության պատգամավոր Արագած Ախոյանը:

Նրա խոսքով՝ Հայաստանը՝ որպես պետություն, ունի իր արտաքին ու ներքին քաղաքականությունը, սակայն իրավական դաշտում այդ պահանջները իրավասու են ներկայացնել միայն հայրենագուրկ մարդկանց իրավահաջորդները: «Մա ես չեմ ասում, սա ասում են իրավաբանները: Սակայն մենք աշխատանքի ճիշտ



քաժանում պետք է իրականացնենք: Պետությունն իր ներքին ու արտաքին քաղաքականությամբ եւ մենք՝ որպես Օսմանյան կայսրության նախկին քաղաքացիներ, ունենք միեւնույն խնդիրները, ուստի անհրաժեշտ է ճիշտ իրավական հիմքեր դնել այս խնդիրների լուծելու նպատակով: Մենք շուտով կմշակենք պահանջներ եւ կներկայացնենք ժողովրդի դատին», - նշեց Ախոյանը: Պատգամավորը հավելեց, որ այդ պահանջները, իհարկե, պետք է խելամուտության սահմաններում լինեն: «Մեր իրավունքների եւ ունեցվածքի վերականգնման կապակցությամբ մենք պետք է ճիշտ պահանջներով ելույթ ունենանք դատական գործընթացներում, եւ այդ գործընթացները պետք է սկսել ոչ թե ինչ-որ այլ երկրներում, այլ հենց Թուրքիայում», - ընդգծեց Արագած Ախոյանը՝ միաժամանակ հավելելով որ դեմ է հատվածական պահանջների ներկայացմանը:

## 74-ամյա հայ գործարարը Կուբայում 15 տարվա ազատագրվման է դատապարտվել

01.10.2014



74-ամյա կանադահայ գործարար, ավտոմեքենաների եւ ծանր սարքավորումների ներկրմամբ զբաղվող Tokmakjian Group Cy ընկերության ղեկավար Սայ Թոքմաջյանին Կուբայում 15 տարվա ազատագրվման են դատապարտել, հայտնում է CHCH-ը: Դատարանը նրան մեղավոր է ճանաչել կաշառակերության, հարկերից խուսափելու մեջ եւ տարբեր տնտեսական հանցագործություններում, որոնք վնաս են հասցրել պետությանը: Մակայն ընկերությունը պնդում է, որ այս բոլոր մեղադրանքներն անհեթեթ են, իսկ գործն ամբողջությամբ կեղծված է: Ավելին, ընկերության ներկայացուցիչները պատրաստ են եղել ապացուցել դա, սակայն Tokmakjian Group-ի փորձագետներին չեն թողել ներկա գտնվել դատական նիստին: Հաղորդվում է, որ Կուբայի իշխանությունները ձերբակալել են ընկերության ավելի քան 100 միլիոն դոլարի հաշիվները:

Մեղադրյալի ընտանիքը մամուլի ասուլիս է կազմակերպել՝ հուսալով համոզել Կուբայի իշխանություններին Թոքմաջյանին թողնել տուն: Գործարարի որդի Բաֆֆի Թոքմաջյանը հայտնել է, որ հորը չի տեսել արդեն 3 տարի, սակայն խոսել է նրա հետ եւ իմացել, որ այժմ գինվորական հոսպիտալում է:

NEWS.am-ն ավելի վաղ հայտնել էր, որ մեծ իրարանցում էր առաջացրել նաեւ կանադացի մեկ այլ հայ գործարար

Սարգիս Յակուբյանի գործը: 2013թ. մայիսին Կուբայի դատարանը նրան մեղավոր էր ճանաչել կաշառակերության, հարկերից խուսափելու եւ ազգային տնտեսությանը վնաս հասցնող գործունեության մեջ: Նա Կուբայում դատապարտվել էր 9 տարվա ազատագրվման, սակայն ավելի ուշ ազատ էր արձակվել եւ ուղարկվել Կանադա: Յակուբյանը Tri-Star Caribbean ընկերության սեփականատերն էր, որն զբաղվում էր շտապօգնության մեքենաների եւ պետկառույցների համար տրանսպորտի այլ միջոցների մատակարարմամբ, դրա շրջանառությունը տարեկան կազմում էր 30 միլիոն դոլար:

## Ֆրեզնոյում բացվել է ԱՄՆ-ում ՀՀ առաջին պատվավոր հյուպատոսի գրասենյակը

22.10.2014



Ֆրեզնոյում, հոկտեմբերի 20-ին, տեղի ունեցավ ԱՄՆ-ում ՀՀ առաջին պատվավոր հյուպատոսի գրասենյակի բացման հանդիսավոր արարողությունը:

ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, որ միջոցառմանը մասնակցում էին ԱՄՆ-ում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան Տիգրան Սարգսյանը, Լոս Անջելեսում ՀՀ գլխավոր հյուպատոս Մերգել Մարկիսովը, ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը, Վաշինգտոնում ԼՂՀ մշտական ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը, համայնքային կառույցների մոտ 400 ներկայացուցիչներ, հոգեւոր հայրեր:

Գրասենյակի բացման արարողությանը հետեւած ճաշկերույթին ներկա էին եւ ելույթներով հանդես եկան Ֆրեզնոյի մարզի կառավարիչների խորհրդի անդամները՝ նախագահ Անդրեաս Բորջեսի գլխավորությամբ, Կալիֆորնիայի նահանգային սենատի անդամ Թոմ Բերիլիլը, ԱՄՆ կոնգրեսական Ջիմ Կոտտան, 5-րդ շրջանի Վերաքննիչ դատարանի դատավոր Շառլ Փուչիկյանը, օտարերկրյա դիվանագետներ, Ֆրեզնոյի մարզի այլ պաշտոնյաներ:

Ֆրեզնոյում ՀՀ պատվավոր հյուպատոս Պերն Աբգարյանն իր խոսքում նշեց, որ իր նպատակն ու գլխավոր խնդիրն է սերտացնել հարաբերությունները Ֆրեզնոյի մարզի եւ Հայաստանի միջեւ, նպաստել մշակութային եւ գործարար կապերի ակտիվացմանը:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Փորձագետները հրապարակել են Հայոց ցեղասպանության հատուցումների մասին զեկույցը

21.09.2014



Հայոց ցեղասպանության հատուցման ուսումնասիրությունների խումբը ավարտել է «Արդարության հաստատում. Հայոց ցեղասպանության հատուցում», գրում է «Asbarez»-ը: Չեկույցն ընդգրկում է 1915-1923թթ. Հայոց Ցեղասպանության հատուցման հարցի իրավական, պատմական, քաղաքական եւ էթիկական ասպեկտների աննախադեպ ու բազմակողմ վերլուծություն:

Հետազոտական խումբը գործում է 2007թ.-ից՝ վնասի փոխհատուցման տեսական եւ գործնական ոլորտներում մասնագիտացված 4 փորձագետների կողմից: Նրանց առաքելությունը Հայոց ցեղասպանության հատուցման հարցի առաջին պարբերական, համակողմանի, խորը վերլուծությունն է: Խմբի անդամներն են Ալֆրեդ դե Մայսը, Ջերմեյն Մաքալոյինը, Արա Պապյանը եւ Անրի Տերիոն:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

## Արամ Ա կաթողիկոսը պահանջում է Սիսի նստավայրը

19.09.2014



Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը դիմելու է Թուրքիայի Սահմանադրական դատարան՝ Սիսի նստավայրը և կալվածքները վերադարձնելու պահանջով:

Այդ մասին, այսօր՝ սեպտեմբերի 19-ին, «Հայաստան-Սփյուռք» 5-րդ համաժողովում հայտարարել է Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն:

«Մեծ Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը առաջիկայում Թուրքիայի Սահմանադրական դատարան կդիմի՝

պահանջելով իր պատմական կենտրոնի՝ Սիսի կաթողիկոսարանի վերադարձը իրավատիրոջը՝ Հայ եկեղեցուն եւ հայ ժողովրդին:

Չենք կարող անտարբեր մնալ մեր ազգին բռնաբարված իրավունքների նկատմամբ. անտարբերությունը ազգային դավաճանություն է: Հետեւաբար, կոչված ենք 100-ամյակը բարձրագույն աստիճանի պատասխանատվությամբ նշելու ու այն արժեւորելու այնպիսի իրագործումներով, որոնք մնայուն հետք են թողնում ու նոր հունավորում են տալիս Հայ Դատի հետապնդման աշխատանքներին», -ասել է նա:

Արամ Ա-ն համոզմունք է հայտնել, որ ժամանակն է՝ Հայ Դատի աշխատանքները Հայոց ցեղասպանության ճանաչումից փոխադրվի իրավական դաշտ»:

Լուրեր Հայաստանից - NEWS.am

